

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ**

ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013195

ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած
ժամանակաշրջանի վերաբերյալ

**ԵՐԵՎԱՆ
Դեկտեմբեր 2014**

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄԸ**

ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013195

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	3-4
ՀԱՏՈՒԿ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ	
Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն	5
Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	6-10
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈՆԻՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱԴՐՈՒՄ	11



"ՍՕՍ-ԱՈՒԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 76

«Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը» ծրագրի 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է Բնապահպանական Ծրագրերի իրականացման Գրասենյակ Պետական Հիմնարկի (ԲԾԻԳ ՊՀ) ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է TF013195 ԳԷՀ Դրամաշնորհի միջոցով ֆինանսավորվող «Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը» ծրագրի (Ծրագիր) հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվությունը, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար
Ծրագրի ղեկավարությունը պատասխանատու է հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի, որը հրապարակվել է Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՀՄՄԽ) կողմից և Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների ֆինանսական Ձեռնարկին (ՀԲ ուղեցույցներ): Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը
Մենք պատասխանատու ենք ՀՄԴ-ի Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ԱԵՄՄԽ) կողմից հրապարակված Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է պահպանել վարկեցողության կանոնները և աուդիտը պլանավորել ու անցկացնել՝ հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Քրուու Գորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ

ԳՅ, ք. Երևան 0037, Ա.Տիգրանյան 38/55; Գեռ.՝ (+37410) 20 11 51; Ֆաքս՝ (+37410) 20 11 50; www.sosaudit.am; Էլ-փոստ՝ info@sosaudit.am

An Associate of the Crowe Horwath Business Alliance

38/55 A.Tigranyan, 0037 Yerevan, RA; Tel.: (+37410) 20 11 51; Fax: (+37410) 20 11 50; www.sosaudit.am; E-mail: info@sosaudit.am



"ՍՕՍ-ԱՌԻԴԻՏ" ՍՊԸ

"SOS-AUDIT" LTD

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման և ոչ՝ ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք


Մեր կարծիքով՝

1. Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի դրամական միջոցների ստացումները և վճարումները՝ համաձայն «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտի և Համաշխարհային բանկի ուղեցույցներին:
2. Ֆոնդերը օգտագործվել են համաձայն Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Ջարգացման Միջազգային Բանկի միջև 2012թ. նոյեմբերի 15-ին կնքված ԳԷՀ TF013195 դրամաշնորհային նամակ համաձայնագրում նշված պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին համաձայն՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսմանը և արդյունավետությանը, և միայն այն նպատակներով, որոնց համար հատկացվել են:
3. Փոխհատուցման դիմումներում ներկայացված ծախսերը ապահովված են համապատասխան հիմնավորող փաստաթղթերով, գրանցումներով և հաշիվներով: Փոխհատուցման դիմումներում ներառված և փոխհատուցված ծախսերը ընդունելի են ֆինանսավորման համար՝ համաձայն 2012թ. նոյեմբերի 15-ին կնքված ԳԷՀ TF013195 դրամաշնորհային համաձայնագրի:
4. Նպատակային հաշիվը վարվել է համաձայն 2012թ. նոյեմբերի 15-ին կնքված ԳԷՀ TF013195 դրամաշնորհի պայմաններին և Համաշխարհային Բանկի համապատասխան ուղեցույցներին:

Հանգամանքների լուսարանում

Առանց ձևափոխելու մեր կարծիքը, Ձեր ուշադրությունն ենք հրավիրում հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 8-ի վրա, որը բացահայտում է, որ Ծրագիրը ավարտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ:

«ՍՕՍ-Աուդիտ» ՍՊԸ
15 դեկտեմբերի, 2014թ.



Մամիկ Դազարյան
Տնօրեն

Handwritten signature
Նազիկ Չիթչյան
Աուդիտոր

Բրուո Կորվաթ Բիզնես Ալյանսի Ասոցիացված Անդամ

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

Դրամական միջոցների ստացումների և ծախսումների մասին հաշվետվություն
2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
(ԱՄՆ դոլար)

	Փաստացի		Բյուջե		Շեղում	
	2013 2014	2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ Անորակա	2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ Անորակա	2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ Անորակա	2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ Անորակա	2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ Անորակա
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԿԶԵՆԱԿԱՆ ՄԱՅՈՐԳ	-	86,072.91	-	-	-	-
Ֆոնդերի արքայությունը						
ԳԷՀ Դրամաշնորհ TF013195	90,000.00	59,553.42	149,553.42	150,000.00	(446.58)	(446.58)
ԸՆԴՎԱՄԵՆԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԱՆ ԱՐՔՅՈՒՆԵՐ	90,000.00	59,553.42	149,553.42	150,000.00	(446.58)	(446.58)
Արտարժուրային վնաս	-	(258.66)	(258.66)	-	-	-
Ֆոնդերի օգտագործում						
(1) Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, մոդովներ, ուսուցումներ, սեմինարներ և գործառնական ծախսեր	3,927.09	143,105.40	147,032.49	150,000.00	(2,967.51)	(2,967.51)
ԸՆԴՎԱՄԵՆԸ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	3,927.09	143,105.40	147,032.49	150,000.00	(2,967.51)	(2,967.51)
ԴՐԱՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄԱՅՈՐԳ	86,072.91	2,262.27	2,262.27	-	-	-

[Signature]



Հակոբ Հակոբյան
Գլխավոր հաշվապահ

Օմոնրագրությունների 6-10 էջերը կազմում են այս հաստիկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1. Ծրագիր

2012թ. մարտի 15-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի (ՎՁՄԲ) միջև ստորագրվել է ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013195 նամակ-համաձայնագիրը, համաձայն որի ՎՁՄԲ-ն Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) հաշվետվություններ կունվենցիաներին պատուհանի միջոցների հաշվին տրամադրել է 150,000 ԱՄՆ դոլար գումարը չգերազանցող դրամաշնորհ:

Ծրագրի վերջնաժամկետ է սահմանվել 2014թ. սեպտեմբերի 30-ը: Առհանումների դիմումների ներկայացման համար սահմանված է Ծրագրի ավարտից հետո չորս ամիս:

1.2. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է՝ օժանդակել Հայաստանի Հանրապետությունում.

- (i) Ներդաշնակեցնել ազգային միջոցառումների ծրագիրը (ԱՄԾ) Միավորված ազգերի կազմակերպության «Անապատացման դեմ պայքարի մասին» Կոնվենցիայի (ՄԱԿԱՊԿ) 10-ամյա ուզանավարական ծրագրի հետ և
- (ii) Պահպանել ՄԱԿԱՊԿ-ի հաշվետվողական և դիտարկման պահանջները:

Ծրագրի ուղղություններն են.

- (i) ԱՄԾ-ի ներդաշնակեցման նպատակով ԱՄԾ-ի դիտարկման և գնահատման անցկացում և իրազեկվածության բարձրացմանը ուղղված միջոցառումների անցկացում,
- (ii) ԱՄԾ-ի ներդաշնակեցման նպատակով մարդկային և գիտական կարողությունների ամրապնդում,
- (iii) ԱՄԾ-ի ներդաշնակեցման և իրականացման նպատակով քաղաքականության և ինստիտուցիոնալ շրջանակի ստեղծում և ամրապնդում և ԱՄԾ-ի իրականացման նպատակով ֆինանսական և տեխնոլոգիական շրջանակի ստեղծում,
- (iv) ձուցանիշների հիման վրա մշտադիտարկման և գնահատման իրականացման նպատակով մարդկային և գիտական կարողությունների ամրապնդում,
- (v) ՄԱԿԱՊԿ-ի 5-րդ (2012) զեկուցման և դիտարկման գործընթացի համար հաշվետվությունների կազմում, և
- (vi) հաշվետվողական գործընթացի հարցում ներպետական պատասխանատվության բարձրացմանն օժանդակում և ԳԷՀ-ի, շրջակա միջավայրի մասին բազմակողմանի համաձայնագրերի տեղեկատվության և գիտելիքների կառավարման (ՇՄԲՊ ՏԳԿ) և հողի որակի վատթարացմանը վերաբերվող այլ տվյալների շտեմարանների ցուցանշային տվյալների և գիտելիքի շտեմարանների ներդաշնակեցում:

1.3. Ծրագրի բյուջե և ֆինանսավորում

Ծրագրի բյուջեն կազմում է 150,000 ԱՄՆ դոլար, որը ամջողությամբ ֆինանսավորվում է ԳԷՀ No. TF013195 դրամաշնորհի միջոցներով:

1.4. Ծրագրի իրականացում

Ծրագիրը իրականացվում է Հայաստանի հանրապետության Բնապահպանության Նախարարության Բնապահպանական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ Պետական Հիմնարկի կողմից (ԲԾԻԳ ՊՀ)
ԲԾԻԳ ՊՀ հասցեն է՝ Արմենակյան փողոց, տուն 129, Երևան, Հայաստանի Հանրապետություն:

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

2.1. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստում և ներկայացում

Ծրագրի հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) Հանրային Հատվածի Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՀՄՍԽ) կողմից հրապարակված «Ֆինանսական հաշվետվություններ հաշվապահական հաշվառման դրամարկղային սկզբունքով» Հանրային Ոլորտի Հաշվապահական Հաշվառման Ստանդարտի համաձայն, և ներկայացվել են Համաշխարհային Բանկի կողմից ֆինանսավորվող ներդրումային գործառնությունների Ֆինանսական Չեռնարկին՝ «RM 3-Ֆինանսական Հաշվետվողականություն և Աուդիտ»-ին (մարտ, 2010) համապատասխան:

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն ներկայացված ժամանակաշրջանների համար:

2.2 Հաշվապահական հաշվառման դրամարկղային հիմունք

Ծրագրի ֆինանսավորումը ճանաչվում է դրամական միջոցների ստացման պահին: Ծրագրի ծախսումները ճանաչվում են որպես Ծրագրի ծախսեր դրանց վճարման պահին:

2.3 Ներկայացման արժույթը

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ԱՄՆ դոլարն է (USD):

Ծրագրի բանկային հաշիվները վարվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: ՀՀ դրամով արտահայտված գործարքները փոխարկվում են ԱՄՆ դոլարի հետևյալ կերպ.

- ՀՀ դրամով արտահայտված ծախսերի վճարումները կապալառուներին և այլ մատակարարներին ներկայացվում են ԱՄՆ դոլարով վճարման օրվա դրությամբ ՀՀ ԿԲ սահմանված փոխարժեքով:

ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքները հետևյալն են.

31 դեկտեմբեր 2013: 1 ԱՄՆ դոլար = 405.64 ՀՀ դրամ,

12 դեկտեմբեր 2014: 1 ԱՄՆ դոլար = 462.81 ՀՀ դրամ:

2.4. Հարկեր

Ծրագրի շրջանակներում հարկերը վճարվում են ՀՀ հարկային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով:

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
 ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

3. ՎԱՐԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՌՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (SOE և SUMMARY SHEET)

Դիմումի համարը	Դիմումի հաստատման ամսաթիվը	Ծախսային հոդված	Ընդամենը
		(1) Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ժողովներ, ուսուցումներ, սեմինարներ և գործառնական ծախսեր	
2	24.06.2014	72,708.71	72,708.71
3	14.11.2014	76,844.85	76,844.85
Ընդամենը		149,553.56	149,553.56

4. Նպատակային հաշվի հաշվետվություն

Հաշվարկային հաշիվ
 Բանկ
 Հասցե
 Արժույթը

900000927013
 Կենտրոնական գանձապետարան
 Մելիք Ադամյան 1, Երևան, Հայաստանի
 Հանրապետություն, 0010
 ԱՄՆ դոլար

ԳԷՀ Դրամաշնորհ No.
 TF013195
 14.03.2013-12.12.2014

1. Սկզբնական մնացորդ 14.03.2013 դրությամբ	-
2. Ավելացում. սկզբնական անհամապատասխանություն	-
3. ՀԲ ֆոնդի կանխավճար/համալրում	150,000.00
4. Նվազեցում. Նպատակային հաշվից մարում ՀԲ-ին	(446.58)
5. Նպատակային հաշվի համալրված գումարի ներկա մնացորդը	<u>149,553.42</u>
6. Նպատակային հաշվի վերջնական մնացորդ 12.12.2014 դրությամբ	-
7. Ավելացում. վճարված ընդունելի ծախսերի գումար	147,032.49
8. Նվազեցում. ստացված տոկոսներ (եթե կրեդիտագրվել են նպատակային հաշիվ)	-
9. Ընդամենը հաշվառված համալրում	<u>147,032.49</u>
10. Տարբերություն (5)-(9)*	2,520.93
(*) Տարբերությունը իրենից ներկայացնում է.	
Էսքրու հաշվի մնացորդ (ծնթ. 5)	2,262.27
Փոխարժեքային տարբերություն (ծնթ. 5)	258.66
	<u>2,520.93</u>

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
 ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

5. Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ներառում է ակտիվները, պարտավորությունները և Ծրագրի զուտ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ: Հաշվետվությունը պատրաստված է հաշվեգրման սկզբունքով, որտեղ գործարքները ճանաչվում են կատարման պահին (այլ ոչ՝ ստացման կամ վճարման պահին):

	12 դեկտեմբեր 2014
	<u>ԱՄՆ դոլար</u>
ԱԿՏԻՎՆԵՐ	
Դրամական միջոցներ (Էսքրոու հաշիվ)	2,262.27
Կանխավճարներ	-
Ընդամենը ակտիվներ	<u>2,262.27</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Կրեդիտորական պարտավորություններ	-
Ընդամենը պարտավորություններ	<u>-</u>
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ	
Աճողական մուտքեր	
ԳԷՀ Դրամաշնորհ No.TF013195	149,553.42
	<u>149,553.42</u>
Աճողական ծախսումներ	
Ծրագրի ծախսումներ	(147,032.49)
	<u>(147,032.49)</u>
Արտարժույթի փոխարժեքային տարբերություն*	<u>(258.66)</u>
Ընդամենը զուտ ակտիվներ	<u>2,262.27</u>

(*) ՀՀ դրամով էսքրոու հաշիվը բացվել է վերջնական աուդիտի վճարման համար: Փոխարժեքային տարբերությունը արդյունք է էսքրոու հաշվի վերազնահատմանը հաշվետու ամսաթվի դրությամբ:

6. Բյուջեի կատարում

Ծախսային հոդված	Աճողական ծախսումներ 12 դեկտեմբեր 2014 դրությամբ	Ընդամենը բյուջե	Կատարում
	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	%
(1) Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ժողովներ, ուսուցումներ, սեմինարներ և գործառնական ծախսեր	147,032.49	150,000.00	98%
Ընդամենը	147,032.49	150,000.00	98%

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

Հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ
2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ

7. Ֆինանսավորում ԳԷՀ Դրամաշնորհ No. TF013195

	հաշվետու ժամանակաշրջան 14.03.2013-12.12.2014		
	ԱՄՆ դոլար		Աճողական
	2013	2014	
Կանխավճար / (մարում)	90,000.00	(90,000.00)	-
SOE և Summary Report	-	149,553.42	149,553.42
Ընդամենը	90,000.00	59,553.42	149,553.42

8. Ծրագրի ավարտ

Ծրագիրն ավարտվել է 2014թ. սեպտեմբերի 30-ին (Ավարտման ամսաթիվ), և գործարքները ավարտվել են 2014թ. դեկտեմբերի 12-ին (Հաշվետվության ամսաթիվ):

Այս հատուկ նպատակների ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ.

- Ծրագրի ավարտման ամսաթվից հետո Ծրագրի գծով չեն կատարվել ծախսեր,
- Ծրագրի ավարտման ամսաթվից հետո ԳԷՀ TF013195 դրամաշնորհի գծով չեն կատարվել փոխհատուցումներ,
- Չկան հաշվետու ամսաթվից հետո ՀԲ-ին ներկայացված Ծրագրին վերաբերվող այլ ծախսեր,
- Չկան Ծրագրին առնչվող կանխավճարների մնացորդներ, չմարված կրեդիտորական պարտավորություններ,
- Հաշվետու ամսաթվի դրությամբ առկա չեն դրամական միջոցների մնացորդներ, բացառությամբ աուդիտորական ծառայության համար էսքրո հաշվից (ծնթ. 5),
- Մենք տեղյակ չենք Ծրագրի դեմ որևէ սպասվող կամ փաստացի դատական հայցի վերաբերյալ

Հայաստանում անապատացման դեմ պայքարի ազգային միջոցառումների ծրագրի ներդաշնակեցումը և ազգային հաշվետվության կազմումը
 ԳԷՀ Դրամաշնորհ TF013195

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԾՐԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՍԱՐՆԵՐԻ ԵՎ
 ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ
 2013թ. մարտի 14-ից մինչև 2014թ. դեկտեմբերի 12-ը ընկած ժամանակաշրջանի վերաբերյալ
 (ԱՄՆ դոլար)

Ծախսային հոդված	Դիմում	ԾԻԳ	ՀԲ	Տարբերություն
Կանխավճար (մարում)	1	90,000.00	90,000.00	
	2	(12,708.71)	(12,708.71)	
	3	(76,844.85)	(76,844.85)	
	Ետ վերադարձ	(446.58)	(446.44)	(0.14)
			(0.14)	0.14
		(0.14)	(0.14)	-
(1) Ապրանքներ, խորհրդատուների ծառայություններ, ժողովներ, ուսուցումներ, սեմինարներ և գործառնական ծախսեր	2	72,708.71	72,708.71	-
	3	76,844.85	76,844.85	-
		149,553.56	149,553.56	
Ընդամենը		149,553.42	149,553.42	